ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ:
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՏԻԿՈՆ ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ
13.02.2026թ.

ԿԱՐԾԻՔ

Նարինե Մնացականի Մովսեսյանի «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հուշագրություններում և սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտության գնահատմամբ» է. 00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

2026 թ. փետրվարի 13-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Վ. Վիրաբյանը, Ս. Պողոսյանը, Խ.Ստեփանյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Լ. Սիմոնյանը, Է. Մելքոնյանը, Ա. Եփրիկյանը, Մ. Եղյանը:

Քննարկվեց Նարինե Մնացականի Մովսեսյանի «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հուշագրություններում և սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտության գնահատմամբ» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ. Վիրաբյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Լ. Սիմոնյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

Հայոց բազմադարյան տարեգրության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի պետականության պատմությունը. այն ազգի գոյատևման ու համակողմանի քաղաքակրթական զարգացման գլխավոր նախապայմանն է: 1918-1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետությունն առերեսվեց բազում ներքին և արտաքին դժվարությունների, հայտնվեց պատերազմական իրավիճակներում, ճնշման ներքո ունեցավ լուրջ տարածքային կորուստներ և ի վերջո անկում ապրեց: Այս պատմափուլի դասերը ներկայիս արտաքին արտաքին քաղաքական գործընթացների առումով ունեն շատ ընդհանրություններ:

Նարինե Մնացականի Մովսեսյանի «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հուշագրություններում և սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտության գնահատմամբ» թեկնածուական ատենախոսությունը պատմագիտական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից բաղկացած աշխատանքում ատենախոսը հիմնավորել է հիմնահարցի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը, ինչպես նաև թեմայի ուսումնասիրվածության աստիճանը և մեթոդաբանությունը: Գիտական շրջանառության մեջ դնելով մեծաքանակ արխիվային և տպագիր սկզբնաղբյուրներ, պատմագիտական գրականություն, հուշագրություններ, պարբերական մամուլի նյութեր՝ ատենախոսը հիմնականում բացահայտել է հիմնահարցի առավել կարևոր կողմերը, ներկայացրել է իր մոտեցումները և կատարել եզրահանգումներ:

Հիմնահարցի առանձնահատկությամբ պայմանավորված ատենախոսության երեք գլուխներն էլ բաժանվել են նույնանման ենթագլուխների՝ ելակետում ունենալով 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրեի, բուն պատերազմի և ավարտական փուլի իրադարձությունների լուսաբանումը պատմագիտության մեջ:

Անտարակույս, հիմնահարցի ուսումնասիրումը երիտասարդ պատմաբանի համար բավականաչափ բարդ է, մանավանդ, երբ ատենախոսը պետք է ներկայացնի և դեպքերին ականատես ժամանակակիցների հուշագրությունները, և սփյուռքահայ, և խորհրդահայ պատմաբանների ուսումնասիրություններն ու տեսակետները, ինչպես նաև

գաղափարական, կուսակցական կապանքները, սուբյեկտիվ մոտեցումները: Նշենք, որ այս դժվարությունները հիմնականում հաղթահարվել են և ատենախոսին հաջողվել է տարբեր փուլերի իրադարձություններին անդրադարձած հեղինակներին ներկայացնել ըստ հիմնահարցերի, հաճախ էլ ավելացնել իր տեսակետները: Առաջին հերթին հարթակի վրա են 1920 թ. քաղաքական կյանքում էական դերակատարություն ունեցած Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժի՝ ՀՅԴ կուսակցության ներկայացուցիչների աշխատություններն ու հուշագրությունները. դրանց հեղինակներն անմիջապես մասնակցել են տվյալ իրադարձություններին, եղել են դեպքերի ականատեսներ:

Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ ժամանակի հայ պատմագիտությունն ըստ ամենայնի քննարկել է հայ-վրացական հարաբերությունները: Հայ գործիչներն իրատեսորեն են գնահատել տարածաշրջանի միակ քրիստոնյա հարևան պետության դիրքորոշումը թուրքական արշավանքի նախօրեին, վրացական պետական գործիչների քաղաքական <ճկունությունը>, որոնք հաշվարկելով թուրք-ռուսական, ինչպես նաև եվրոպական պետությունների հավակնությունները, կարողացան բոլոր կողմերի հետ վարել հավասարակշռված քաղաքականություն՝ ապահովելով իրենց անվտանգությունն ու անկախությունը /Ս. Վրացյան, Հ. Տեր-Հակոբյան, Ռուբեն և ուրիշներ/: Միաժամանակ, ըստ նրանց Արևմտյան Հայաստանի նվաճումը Թուրքիայի կողմից էապես նվազեցնում էր Հայաստանի կշիռը տարածաշրջանում և բարձրացնում Վրաստանի դերն Անդրկովկասում, հանուն ինչի վրացական կողմը պատրաստ էր ողջունել թուրքական նվաճումները Հայաստանում:

Ըստ ատենախոսի, այդուհանդերձ ժամանակի հայ պատմագիտական միտքը կարևորում և գնահատում է հետպատերազմյան իրավիճակում հայ-վրացական բարիդրացիական հարաբերությունների ու ռազմական դաշինքի անհրաժեշտությունը:

Ատենախոսը հանգամանորեն անդրադառնում է նաև հայ-ադրբեջանական, թուրք-վրացական, թուրք-ադրբեջանական, հայ-ռուսական և այլ երկրների հետ հարաբերությունների վերաբերյալ հայ հեղինակների գնահատականներին:

Եզրակացությունն այն է, որ Հայաստանի վրա հարձակումից առաջ Թուրքիան կարգավորել էր հարաբերությունները Ռուսաստանի, Վրաստանի հետ՝ ապահովելով նրանց չեզոքությունը:

Ուշագրավ են նաև պատերազմի նախօրեի և բուն ընթացքի իրադարձությունների վերաբերյալ սփյուռքահայ և խորհրդահայ հեղինակների գնահատականների լուսաբանումները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Կարսի անկման գնահատականին՝ որպես պատերազմի ելքի համար վճռորոշ, շրջադարձային նշանակություն ունեցող իրադարձություն, ինչպես նաև պատերազմի սկսման օրը ճշգրտելու հարցին:

Ատենախոսը քննարկել է խորհրդահայ որոշ հեղինակների /Ս. Ալիխանյան, Ս. Կարապետյան, Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան և ուրիշներ/ գիտական, գաղափարական էվոլյուցիան և ներկայացնում նաև նրանց նորովի գնահատականները: Մասնավորապես նշում է, որ <Նրանք ժխտում են իրենց նախորդ մի շարք տեսակետները և անընդունելի են համարում թուրք-հայկական պատերազմի ամբողջ մեղքը բարդել դաշնակցականների վրա: Այլևս չեն անտեսում քեմալականների զավթողական քաղաքականությունը՝ ճշմարտորեն տեղեկացնելով, որ պատերազմը սկսել է թուրքական կողմը> /էջ 100/:

Ատենախոսի կարևոր եզրահանգումներից մեկն էլ այն է, որ <Սփյուռքի պատմաբանները նկատելիորեն անտեսում են արտաքին քաղաքական գործոնը՝ ՀՀ կառավարության ոչ ճկուն վարվելակերպի առումով: Հնարավոր չէր անտեսել ծայրաստիճան վտանգավոր թուրք-բոլշևիկյան դաշինքը և միջոցներ չձեռնարկել այդ քաղաքական իրողության դեմ: Ժողովրդի և բանակի հուսահատությունը երկու կողմերից իրականացվող հարձակումների պայմաններում էապես կոտրեց մարդկանց մարտունակությունը, ի չիք դարձրեց հաղթանակի նրանց ակնկալումները> /էջ150-151/:

Անդրադառնալով պատերազմի ավարտական փուլի գնահատականներին՝ ատենախոսը հատուկ վերլուծության է ենթարկում հատկապես Ալեքսանդրապոլի պայմանագրի վերաբերյալ պատմագիտական գնահատականները: Համոզիչ են նաև ատենախոսության եզրակացությունները:

Ընդհանուր առմամբ Ն. Մովսեսյանն ստեղծել է ուշագրավ աշխատանք, որն աչքի է ընկնում գիտականությամբ և հստակ մեթոդաբանությամբ:

Այդուհանդերձ, ատենախոսությունը զերծ չէ նաև թերություններից և վրիպումներից:

1. Մեր կարծիքով ատենախոսության վերնագիրը որոշ խմբագրման կարիք ունի. Ճիշտ կլիներ ձևակերպել այսպես. <1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հուշագրությունների, սփյուռքահայ և խորհրդահայ պատմագրության գնահատմամբ>: Միաժամանակ ենթագլուխներում նշված <ժամանակակիցների աշխատություններում> արտահայտության փոխարեն պետք է գործածել <հուշագրություններում> եզրույթը:
2. Աշխատանքն ավելի կշահեր, եթե ատենախոսը հիմնավորեր խորհրդային պատմագիտության գաղափարական ընթացքը պայմանականորեն երեք փուլերի՝ 1920-1940-ական թթ., 1950-1960-ական թթ., 1970-1980-ական թթ. առանձնացումը, հատկապես երբ այս բաժանումը բուն շարադրանքում առկա չէ: Այսպես ատենախոսը հաճախ դուրս է եկել ժամանակագրական շրջանակներից և անդրադարձել է թե սփյուռքահայ, թե հայրենի հետխորհրդային շրջանի հեղինակներին /Գ. Յազճյան, Ռ. Հովհաննիսյան, Լ. Խուրշուդյան, Ռ. Սաֆրաստյան, Ա. Հակոբյան, Գ. Մախմուրյան, Ռ. Փիրումյան, Ա. Ազատյան, Խ. Ստեփանյան, ՀՀ ԳԱԱ ՀՊ 4 հատորներ և այլն/:
3. Ատենախոսությունն երբեմն ծանրաբեռնված է բուն հիմնահարցին չառնչվող նյութերով, ինչպես օրինակ արցախահայության համագումարներին, արցախահայության ազատագրական պայքարին վերաբերող իրադարձությունների պատմագիտական գնահատականներով /հիմնականում 1918-1919 թթ. վերաբերող փաստեր , երևույթներ/:
4. Աշխատանքում առկա են նաև տեխնիկական, ուղղագրական սխալներ ու վրիպակներ: Օրինակ, ոչ թե <Արևելյան ժողովուրդների համագումար>, այլ <Արևելքի ժողովուրդների համագումար> /էջ 110/ և այլն:
5. Մեր կարծիքով հիմնահարցին անմիջապես առնչվող հուշագրություններ /Ս. Վրացյան, Կյանքի ուղիներով, 6 հատոր, Հակոբ քահանա Սարիկյան, Թորգոմ Վեհապետյան, <Նոր սերունդը՝ քավության նոխազ> և այլն/, ինչպես նաև Կ.Սարդարյանի, Ա. Սիմոնյանի աշխատությունները:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ավելի կատարյալ գիտական աշխատանք ունենալու նպատակ են հետապնդում և ամենևին չեն նսեմացնում ատենախոսի կատարած մեծածավալ աշխատանքը: Նարինե Մնացականի Մովսեսյանի

«1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հուշագրություններում և սփյուռքահայ ու խորհրդահայ պատմագիտության գնահատմամբ» թեկնածուական ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ, համապատասխանում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակն էլ լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն» մասնագիտությամբ գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2026 թ. փետրվարի 13-ի նիստում /արձանագրություն թիվ 9/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության
ամբիոնի վարիչի պաշտ.՝ **պրոֆ. Է. Գևորգյան**

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանի
ստորագրությունը հաստատում եմ.
ՀՊՄՀ գիտ. քարտուղար դոց. Հ. Թադևոսյան

13.02.2026 թ.